ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 4

Երևանի Կոնդ թաղամասի քաղաքաշինական վերակենդանացման բաց միջազգային մրցույթի ժյուրիի

(ամփոփիչ նիստ)

ք. Երևան «6» հոկտեմբերի 2021 թ.

2021 թվականի հոկտեմբերի 6-ին ՀՀ քաղաքաշինության կոմիտեում, հասցե՝ ք. Երևան, Հանրապետության հրապարակ, Կառավարական տուն 3, ժամը 18:00-ին կայացավ Երևանի Կոնդ թաղամասի վերակենդանացման բաց միջազգային մրցույթի ժյուրիի ամփոփիչ նիստը:

Նիստին մասնակցում էին.

Ժյուրիի նախագահ՝

1. Հրաչյա Պողոսյանը	ճարտարապետ	ՀԽՍՀ վաստակավոր ճարտարապետ, ՀՃԱ ակադեմիկոս, Ճարտարապետության միջազգային ակադեմիայի Մոսկվայի մասնաճյուղի թղթակից անդամ

Ժյուրիի անդամներ՝

2. Արմեն Ղուլարյանը	ճարտարապետ	ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահ
3. Մկրտիչ Մինասյանը	ճարտարապետ	Ճարտարապետների պալատի նախագահ
4. Նունե Պետրոսյանը	ճարտարապետ	ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի տեղակալ
5. Դավիթ Ճգնավորյանը	դիզայներ	Երևանի քաղաքապետի խորհրդական
6. Արմենակ Գրիգորյանը	ճարտարապետ	ՃՇՀԱՀ ճարտարապետական նախագծման և ճարտարապետական միջավայրի դիզայնի ամբիոն
7. Հովհաննես Սանամյանը	ճարտարապետ	ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության պատմամշակութային ժառանգության

		գիտահետազոտական կենտրոնի տնօրեն
8. Քրիս Մարշալը (առցանց)	ճարտարապետ	Յանգ Լայֆ ծրագրի համակարգող
9. Գագիկ Գյուրջյանը	ճարտարապետ	ICOMOS-ի Հայաստանի ազգային կոմիտեի նախագահ
10. Մարիա Կրիստինա Ջիամբրունոն (առցանց)	ճարտարապետ	Միլանի պոլիտեխնիկական համալսարանի պատմաճարտարապետական ժառանգության պահպանության ամբիոն
11. Մաուրիցիո Բորիանի (առցանց)	ճարտարապետ	Միլանի պոլիտեխնիկական համալսարանի պատմաճարտարապետական ժառանգության պահպանության ամբիոն
12. Վաղինակ Գևորգյանը	պատմաբան	
13. Կարինե Քոչարը	արվեստաբան	Հր. Քոչարի թանգարանի տնօրեն
14. Նվարդ Մելքոնյանը	սոցիոլոգ	Երևանի պետական համալսարանի Սոցիոլոգիայի ֆակուլտետի Սոցիալական աշխատանքի և սոցիալական տեխնոլոգիաների ամբիոն
15. Մերի Խաչատրյանը	իրավաբան	«Սախարովի պաշտպանության» հասարակական կազմակերպություն
16. Մարկ Գրիգորյանը	լրագրող	«Ալ. Թամանյանի անվան ճարտարապետության ազգային թանգարան-ինստիտուտ» ՊՈԱԿ-ի տնօրեն
17. Արմեն Եգանյանը	տնտեսագետ	ՀՀ էկոնոմիկայի նախարարության արդյունաբերության զարգացման վարչության պետ

18. Նարեկ Տերյանը	ֆինանսիստ	ՀՀ էկոնոմիկայի փոխնախարար
19. Հարություն Վանյանը	հնագետ	ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության պատմության և մշակույթի հուշարձանների պահպանության վարչության պետ
20. Նաիրա Երեմյանը	Կոնդի բնակիչ	
21. Լյուսյա Հովհաննիսյանը	Կոնդի բնակիչ	
22. Գոհար Հովհաննիսյանը	Կոնդի բնակիչ	
23. Կարեն Մարտիրոսյանը	Կոնդի բնակիչ	

Բացման խոսքով հանդես եկավ ժյուրիի նախագահ Հրաչյա Պողոսյանը, հակիրճ ներկայացնելով նախորդ երեք քննարկումների ընթացքում քննարկված հարցերն ու դիրքորոշումները:

Կոմիտեի նախագահ Արմեն Ղուլարյանը հորդորեց ներկաներին նախորդ հանդիպումների ընթացքում բարձրացված հարցերի և պարզաբանումների հիման վրա փորձել, ներկայացված աշխատանքներից, ընտրել հաստատված առաջադրանքի բոլոր պահանջներին առավել համապատասխանող, քաղաքի պատմական միջավայրի պահպանության, վերաօգտագործման շահերն առավել հաշվի առնող, բնակիչների առաջադրած խնդիրներին առավել համապատասխանող և լուծում տվող տարբերակները:

Դիտարկելով նաև հետագայում դրանց համատեղ՝ լավագույն մոտեցումների համադրման արդյունքում միասնական տարբերակի մշակման հնարավորությունը:

Ժյուրիի ամփոփիչ նիստի մասնակիցները մտքեր փոխանակեցին գործընթացի կազմակերպման ընթացքում արծարծված հարցերի, պատմական ժառանգության և ձևավորված քաղաքաշինական միջավայրի պահպանման և հարմարվողական վերաօգտագործման գործընթացի առավել խնայողական մոտեցումներ ներառող տարբերակների մասին:

ICOMOS-ի Հայաստանի ազգային կոմիտեի նախագահ Գագիկ Գյուրջյանի կողմից կարևորվեց իրականացման գործընթացին նախորդող հնագիտական պեղումների անցկացման անհրաժեշտությունն ու հաջորդ փուլի առաջադրանքում պահանջի ներառման կարևորությունը:

Սոցիոլոգ Նվարդ Մելքոնյանի կողմից կարևորվեց կատարված հարցումների արդյունքների վերլուծությամբ ընդհանրացրած և բնակչության տարաբնույթ մոտեցումներն արտահայտող դիտարկումները ներառել մրցույթի պայմաններում:

Իրավաբան Մերի Խաչատրյանի դիտարկումների հիմքում դրված էին բնակչության շահերի պահպանման խնդիրների կարևորումը:

Մրցութային ժյուրիի քարտուղար Մարտուն Գրիգորյանի կողմից ներկայացվեցին մրցույթի արդյունքների գնահատման հարցաթերթիկը, գնահատման սկզբունքները:

Ժյուրիի կողմից լրացված գնահատման թերթիկների հավաքագրման արդյունքում Մարտուն Գրիգորյանի ղեկավարությամբ ստեղծված հաշվիչ հանձնաժողովի կողմից ընդհանրացվեցին արդյունքները և հայտարարվեցին նիստի մասնակիցներին: Մրցույթի 1-ին փուլի ամփոփման արդյունքում՝ 2-րդ փուլ են անցել ամենաբարձր միավոր հավաքած թվով 7 աշխատանք:

Մասնավորապես.

1. ծածկագիր՝ 3660565 – 755.7 միավոր,
2. ծածկագիր՝ 6230854 – 708.7 միավոր,
3. ծածկագիր՝ 4518468 – 644.5 միավոր,
4. ծածկագիր՝ 2296437 – 599.6 միավոր,
5. ծածկագիր՝ 0000073 – 563.3 միավոր,
6. ծածկագիր՝ 2212431 – 532.6 միավոր,
7. ծածկագիր՝ 9374010 – 528.2 միավոր:

Ներկայացված աշխատանքներից մեկը /ծածկագիր՝ 1401624/ ժյուրիի որոշմամբ չի գնահատվել՝ մրցույթի գաղտնիության պայմանները խախտելու պատճառով:

Ժյուրիի ամփոփիչ նիստի մասնակիցները՝ թվով 23 մարդ **որոշեցին**.

1. Հաստատել՝ Երևանի Կոնդ թաղամասի քաղաքաշինական վերակենդանացման բաց միջազգային մրցույթի 1-ին փուլի գնահատման արդյունքները.

Կողմ՝ 23 Դեմ՝ 0:

2. Երաշխավորել՝ ներքոհիշյալ ծածկագրերով մասնակիցների մասնակցությունն Երևանի Կոնդ թաղամասի քաղաքաշինական վերակենդանացման բաց միջազգային մրցույթի 2-րդ փուլին:

1. ծածկագիր՝ 3660565 – 755.7 միավոր,
2. ծածկագիր՝ 6230854 – 708.7 միավոր,

3. ծածկագիր՝ 4518468 – 644.5 միավոր,
4. ծածկագիր՝ 2296437 – 599.6 միավոր,
5. ծածկագիր՝ 0000073 – 563.3 միավոր,
6. ծածկագիր՝ 2212431 – 532.6 միավոր,
7. ծածկագիր՝ 9374010 – 528.2 միավոր:

3. Հրապարակել՝ Երևանի Կոնդ թաղամասի քաղաքաշինական վերակենդանացման բաց միջազգային մրցույթի 1-ին փուլի գնահատման արդյունքները:

Ժյուրիի նախագահի կողմից հանձնարարություն տրվեց համակարգողին՝ 3-օրյա ժամկետում գնահատման արդյունքները տեղադրել մրցույթի https://kond.minurban.am/hy կայքում և ուղարկել մասնակիցների էլեկտրոնային փոստերին:

Պայմանավորվածություն ձեռք բերվեց երկրորդ փուլին նախորդող 10-օրյա ժամանակահատվածում կազմակերպել մասնակիցների հետ հանդիպում՝ մասնակցության հուշանվեր-արձանիկների և հավաստագրերի հանձնման հանդիսավոր արարողություն իրականացնելու համար:

Աշխատանքն ավարտելուց հետո ժյուրիի նախագահ Հրաչյա Պողոսյանն ու ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահ Արմեն Ղուլարյանը շնորհակալություն հայտնեցին ժյուրիի անդամներին բարդ և պատասխանատու աշխատանքի համար և ամփոփիչ նիստը հայտարարեց փակված:

Ժյուրիի նախագահ՝ Հրաչյա Պողոսյան

Ժյուրիի քարտուղար /արձանագրող/՝ Մարտուն Գրիգորյան

6.10.2021թ.